

հաւր իւրոյ բարեպաշտ իշխանին Ջաջուոյ եւ ետ ի սր մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն սրբոյ Ածածնին, եւ է բնական տուն եւ շիրիմ Ջաջուոյ իշխանի եւ նախնեաց իւրոց եւ է ի գաւառին Արցախոյ, եւ է հանդէպ ամրոցին որ կոչի Պալիսանաբերդ. ի տերութեան երկից հարապատացն բարեպաշտ իշխանացն Ջալալին, Ջաքարիայի, Իւանեի:

Իսկ վերակացեալ սպասաւորք սր ուխտին սահմանեցին ի տարւոյն մի աւր պատարագ մատուցանել իշխանին Ջաջուոյ ի տաւնի գալստեան սր Հոգւոյն, եւ որ զայս յիշատակս կատարէ աւրհնի յԱյ. եւ որ զայս գիրս յայս սր ուխտէս//

349ա. զինչ եւ իցէ պատճառանաւ հեռացուցանէ, զատի ի տէ. եւ վարձս զկայէնին առցէ, ամէն:

Արդ գրեցաւ սա ի թուիս հայոց: ՈՅԱ: ի գաւառիս Կայենոյ ի գերահռչակ սր ուխտս Գէտկայ, ընդ հովանեաւ սր Ածածնին եւ սր Լուսաւորչիս Գրիգորի, ձեռամբ մեղապարտ Ստեփանոսի իշխանութիւն իշխանաց իշխանի աթաբակ Իւանէի, եւ որդւոյ նորա Աւագին, եւ վասն զի վրաց թագաւոր ոչ գոյր, ունէր զաթոռակալութիւնն դուստր Թամարին եւ ի հայրապետութեանն հայոց տր Կոստանդնի. եւ յԱղուանից հայրապետութեանն տն Յովաննիսի. Արդ առաջեմ զամենեսեան, որք ընթեռնուք կամ ընդաւրինակէք/

349բ. յիշեալիք ի տր Ած զՔսասէր պատրոնն զՎանենի զստացող սուրբ մատենիս, յիշեալիք ի Քս զհայր նորին զբարեպաշտ իշխանն զՋաջուոյ եւ զայլն սուրբ նախնիսն նորա:

Յիշեալիք ի տր զմեղապարտ գրիս զՍտեփանոս եւ զծնաւդս մեր: Եւ ինքն Քս որ առատն է ի պարգեւս յիշողացդ եւ յիշեցելոցն ողորմեսցի յիւրում գալստեանն եւ նմա փառք ընդ հաւր եւ ընդ հոգւոյն սրբոյ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Յայսմ ամի եկն ազգն Նեոողաց եւ զրմայրաքաղաքն Գանձակ հիմն ի վեր արարեալ կոտորեաց զմարդ եւ զանասուն, եւ զբազումս ի քրիստովնէիցն:

#### ՅԱԽԵԼՈՒԱԾ Բ. 4.

Ա. Գիրք եր. 34.

Ձեռ. Էջմ. No, 994 ՆԺ.

317ա. Ես Վանէնի աղախին Քի դուստր Ջաջուոյ Պաղբակեանց, ամուսին Կուկին որդւոյ Աբասա Սեւադեանց, իշխանաժեանց, միաբանեցա ի Պորանչատոյ սր Ածածինս. յիշելով զբանն Եսայա մարգարէի. երանի որ ունիցի զաւակ ի սիոն եւ ետու զծախս սր աւետարանիս, ստանալ զսա ինձ զաւակ հոգեւոր յեկեղեցի յիմանալիս Եմ. ի ժամանակս թագաւորութե դստեր Թամարին թոռին Գէորգեայ, եւ ի տերութե այրատեան (Տ!) նահանգին եւ Պաշենոյ. մինչ Միկողմանս Չարեքին աթաբակ Իւանէի. յայսմ ժամանակի ինքնակալ տանս Ռաանա Վարհամ եւ Ասաղն եղբայր իւր. ի հայրապետութե տն Յովաննիսի ի ՈՂԳ. թվականիս/

317բ. եւ շինող եւ առաջնորդ վանիցս Վանական վարդապետն հաստատեաց աւուր մահուան իմոյ: Ա: քառասունք. Ը. աւր անրիծք, եւ յամէն տարի: Ա: աւր ժամ յիշատակ ինձ. յինանցն յաւուր տաւնի աւետեաց Ածածնին

Արդ թէ ոք զայս աւետարանս յայս եկեղեցւոյս հանէ ի մերոց կամ յաւտարաց, նզովս առցէ, եւ իմ խղճոյս տէր է. կատարիչք հրամանի գրոյս աւրհնեալ եղիցին յԱյ ամէն:—

Տես Արարատ. 1876. Արցախ. Բարխուդարեանի. 407. Ձեռ. Էջմ. No, 994 ՆԺ.

#### ՅԱԽԵԼՈՒԱԾ Բ. 5.

Ա. Գիրք. 38. Ժ.

Ձեռ. Էջմ. No. 377/2634 Գ. ց. 103բ-104ա.

#### Ներքին լուսանցքում.

Քս Ած քո սր հարչարանացդ եւ սր յարութեդ բարեխաւսութե թող զմեզս եւ զյանցանս ըստացողի սր աւետարանիս զՍատաղին եւ զիւր հաւրն եւ մաւրն եւ զկենակցին իւրոյ զԴիւլատին թող զմեզքն եւ քաւեա զյանցանս զիւրն եւ զիւր ծնաւդացն ամէն: Եւ զիւրեանց որդիքն զտր Եղիշայ, զՍակիկն, զՎարդան, զՀովաթեղ, զԱսպանչայ, զՍուլթանչայ. տր Ած ընդ երկայն աւուրս առնէ ամէն:

145բ-146ա. Հայր սր. միջնորդութե. միածնիդ եւ փառակից սր. հոգւոյդ թող զմեզս եւ ջնջեա զյանցանս զկամայն եւ զակամայն, Չսատաղին եւ զիւր ծնողացն, Չղիւլատին եւ զիւր ծնողացն ի քո յահաւոր եւ ի միւսանդամ գալստեան:

#### 16բ-169ա. Ներքին լուսանցքում.

Չտառապեալ ոգի մեղաւք զամէնամեղ զՍատաղայ եւ զկենակիցն իւր զԴիւլատն, յիշեա Քս Ած ի քում արքայութեդ:

Եւ զանարժան գծող սորա Քս սր տեսող արժանի արա եւ զԵղիշայ սր քահանայ ամա վայելող ընդ երկայն աւուրս արա:

218բ. Փառք անեղին, անմահին հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, այժմ եւ անզրաւ յաւիտենիւ ամէն:

Որ ետ կարողութի տկարութես իմում հասանել ի վերջին գիծ, սր եւ ածաղարդ եւ հոգեբուխ ածախաւս աւետարանիս, քառավտակ եւ եղեմարուխ չորք վտակաւք արբուցանելով զպասքեալ ծարաւիս ածաղաւան սրբահաւատ ժողովրդոցս: Որ է սա դուռն երկնից եւ ճանապարհ արքայութեան ըստ հրամանի, եթէ ես եմ ճանապարհ եւ դուռն մտից կենացն յաւիտենից: Սա է աւետաւոր յայսմ աշխարհիս, մեղաւորացս յոյս չնորհելով թողութե մեղաց: Սա է առաջնորդ եւ ցուպ ապառնի դիմել իյերկինս առ անձկալին ամենեցուն Քս: